ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

aecp
the armenian eyecare project
bringing sight to armenian eyes

WORLD DIABETES FOUNDATION

AAD

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԷՆԴՈԿՐԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ

COVID-19 ԵՎ ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ

Հաճախ տրվող հարցեր

ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ

Ինչո՞ւ է կարևոր պատվաստվել, եթե շաքարային դիաբետ ունեք:

Շաքարային դիաբետ կարող է վատթարացնել COVID-19-ի ելքը: Շաքարային դիաբետ ունեցողների շրջանում COVID-19-ի ծանր ընթացքի հավանականությունը 2-4 անգամ ավելի մեծ է: Շաքարային դիաբետ ունեցողները 3 անգամ ավելի հաճախ են մահանում COVID-19-ից:

Կարելի՞ է պատվաստվել շաքարային դիաբետի դեպքում, եթե ստանում եք ինսուլին:

Շաքարային դիաբետ ունեցողներին COVID-19 դեմ պատվաստումը խորհուրդ է տրվում առաջնահերթության կարգով՝ անկախ բուժման տեսակից: Մինչ պատվաստվելն անհրաժեշտ է համոզվել, որ արյան շաքարի մակարդակը կայուն է, առողջական վիճակը՝ բավարար:

Ո՞ր պատվաստանյութն է լավը:

Ապացուցված է, որ հաստատված բոլոր պատվաստանյութերն անվտանգ ու արդյունավետ են և մարդկանց պաշտպանում են COVID-19-ից:

Ո՞րն է պատվաստման առավելությունը:

COVID-19-ի ծանր ընթացքի կանխարգելման ամենաարդյունավետ միջոցներից է համարվում ժամանակին իրականացված պատվաստումը:

Կարո՞ղ է պատվաստումն ազդել շաքարային դիաբետի ընթացքի վրա:

Ինչպես ցանկացած պատվաստում, COVID-19-ի դեմ պատվաստումը ևս առաջին օրերին կարող է առաջացնել արյան մեջ գլյուկոզայի մակարդակի բարձրացում: Այդ պատճառով խորհուրդ է տրվում խստորեն հսկել արյան մեջ գլյուկոզի մակարդակը և խուսափել ջրազրկումից:

Որո՞նք են շաքարային դիաբետ ունեցողների պատվաստման հակացուցումները:

Շաքարային դիաբետ ունեցողների պատվաստման հակացուցումներ չկան: Շաքարային դիաբետի սուր ախտանշանների դեպքում (շաքարախտային կետոացիդոզ, հիպերօսմոլյար հիպերգլիկեմիկ վիճակ, լակտատացիդոզ, ծանր հիպերգլիկեմիա) անհրաժեշտ է վիճակի կոմպենսացիա, որից հետո՝ պատվաստում:

2022